Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի ԹԻՎ ԹԻՎ 154, 155, ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ ԹԻՎ 156-159, ԱՊՐԻԼԻ 27-Ի ԹԻՎ 160, ԱՊՐԻԼԻ 28-Ի ԹԻՎ ԹԻՎ 161-166 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ թիվ 154-166 որոշումների հերթական համարներից անմիջապես հետո բացակայում է նշումը իրավական ակտի բնույթի մասին։

Թիվ թիվ 154, 155, 157, 158, 160, 161, 162, 163, 165 որոշումների նախաբաններում «հաստատված» բառի փոխարեն անհրաժեշտ էր գրառել «սահմանված» բառը։

Թիվ 156 որոշման նախաբանում հղում է կատարված «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին, որով սահմանվում է նույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված՝ 300 քառակուսի մետր հողամասից ավել զբաղեցված, չկառուցապատված հողամասի օտարման կարգը։ Հետևաբար հղում պետք է կատարել նույն օրենքի 2-րդ հոդվածին, որով սահմանվում է մինչև 300 քառակուսի մետր սահմանազատված պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի և (կամ) դրանց վրա կառուցված բնակելի տների և (կամ) բնակելի նշանակության օժանդակ շինությունների օրենքի ուժով ֆիզիկական անձի (անձանց) սեփականության իրավունքվ օտարման կարգը։

Իսկ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի ուժով անհատույց տրամադրվող անհատական բնակելի տների կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսի առավելագույն չափը սահմանված է ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշմաբ /ք. Մարալիկ՝ 400 քառ. մետր/։

Որոշման նախաբանում հղում է կատարվել նաև ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին, համաձայն որոնց սահմանվել են առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթերում սեփականատերերի կողմից նշված չափից մինչև 20 տոկոս ավելի յուրաքանչյուր միավոր հողամասի կամ սեփականաշնորհված ընդհանուր հողաբաժնի չափից փաստացի օգտագործման դեպքում նշված հողատարածության նկատմամբ նրանց սեփականության իրավունքի ճանաչման դեպքերը։

Համայնքի ղեկավարի որոշման մեջ անհրաժեշտ է հստակեցնել, որոշման ընդունման համար հիմք հանդիսացող իրավական ակտը և ճշտել անհատույց սեփականության իրավունքով քաղաքացիներին տրամադրվող հողամասի մակերեսը։

Թիվ 164 որոշման հղումը անհրաժեշտ էր կատարել ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 828-Ն որոշման 1-ին կետով հաստատված Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում

քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգի 2-րդ կետին։

Թիվ 166 որոշման հղումը՝ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգին, սխալ է գրառված։ Որոշման 4-րդ կետում ուժը կորցրած ճանաչվող իրավական ակտի լրիվ անվանումը չի գրառված։ Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի՝ իրավական ակտի գործողությունը դադարեցնող իրավական ակտում գրառվում է գործողությունը դադարեցվող իրավական ակտի լրիվ անվանումը։ Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ենթաօրենսդրական իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, ակտի վերնագիրը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը։

26.05.2022 թ.